

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

26.11.2018թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Վ.Դավթյանը,
Լ.Պետրոսյանը, Ն.Բաղդասարյանը
ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

ՀՀ ՎԿ գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանը,
ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ա.Վարդանյանը,
ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
ՀՀ ՎԿ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ.Մարկոսյանը

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1.2019 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տնային տնտեսություններում իրականացվելիք «Կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթն ու ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների օրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

Որոշեցին՝

հաստատել 2019 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տնային տնտեսություններում իրականացվելիք «Կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթն ու ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների օրագիրը»՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 20-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու» և «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի օգոստոսի 15-ի թիվ 10 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 20-Ն որոշումը և հաստատել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

/Նորմատիվ, անհատական/

30.11.2018թ. նիստին

Մասնակցում էին՝

- ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
- ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Ն. Բաղդասարյանը, Վ.Դավթյանը, Լ. Պետրոսյանը,
- ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

- ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
- ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ա. Վարդանյանը,
- ՀՀ ՎԿ վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն.Մուշեղյանը,
- ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը,
- ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա.Ավագյանը,
- ՀՀ ՎԿ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը,
- ՀՀ ՎԿ ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ.Տիտիզյանը,
- ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք.Պողոսյանը,
- ՀՀ ՎԿ առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա.Համբարձումյանը,
- ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա.Գրիգորյանը,
- ՀՀ ՎԿ արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի վիճակագիր Ա. Հակոբյանը,
- ՀՀ ՎԿ առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Մ. Դալլաքյանը,
- ՀՀ մարդահամարի վարչության պետ տեղակալ Բ. Գևորգյանը:

Նիսպրում լավեցին հեղեղայլ հարցերը.

1. «2019 թվականի վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

Որոշեցին՝

հաստատել «2019 թվականի վիճակագրական ծրագիրը»՝ համաձայն հավելվածի:

/Նորմատիվ/

2.«Անասնաբուծության դրության մասին» ձև 24-ԳՏ (ամսական) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2012 թվականի օգոստոսի 17-ի թիվ 27-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու», «Անասնաբուծության դրության մասին» ձև 24-ԳՏ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու», «Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը և աշնանացանի ընթացքը» ձև 29-ԳՏ (ամսական) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 48-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու», «Գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը և աշնանացանի ընթացքը» ձև 29-ԳՏՀ (ամսական) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 49-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Ավագյան/

Որոշեցին՝

հաստատել որոշումներն ըստ ներկայացված նախագծերի:

/Նորմատիվ/

3. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 7-ի ««Տեղեկություններ հիմնական միջոցների, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների առկայության և շարժի մասին» Ձև թիվ 11-ՀՄ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 46-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և «Տեղեկություններ հիմնական միջոցների, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների առկայության և շարժի մասին» Ձև 11-ՀՄ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Խաչատրյան/

Որոշեցին՝

հաստատել՝ «Տեղեկություններ հիմնական միջոցների, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների առկայության և շարժի մասին» Ձև 11-ՀՄ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը համաձայն հավելված 1-ի և 2-ի, ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 7-ի ««Տեղեկություններ հիմնական միջոցների, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների առկայության և շարժի մասին» Ձև թիվ 11-ՀՄ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 46-Ն որոշումը, սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

/Նորմատիվ/

4.««Գրադարանների գործունեության մասին» Ձև 6-գմ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը» և «Նախադպրոցական հաստատությունների մասին» Ձև 85-գմ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևերը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Գրիգորյան/

Որոշեցին՝

հաստատել որոշումներն ըստ ներկայացված նախագծերի:

/Անհատական/

5. «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 1-ՏԳ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 20-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու» և «Կազմակերպության ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» Ձև 3-Ֆ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 22-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Հ.Տիփիզյան/

Որոշեցին՝

հաստատել որոշումներն ըստ ներկայացված նախագծերի:

/Նորմատիվ/

6. ««Ներգնա և ներքին զբոսաշրջության մասին» Ձև 1-զբոսաշրջություն (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության և «Ներգնա, ներքին և արտագնա զբոսաշրջության մասին» Ձև 2-զբոսաշրջություն (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2001 թվականի ապրիլի 4-ի թիվ 35 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Բ.Պողոսյան/

Որոշեցին՝

հաստատել՝ «Ներգնա և ներքին զբոսաշրջության մասին» Ձև 1-զբոսաշրջություն (եռամսյակային), Ձև 2-զբոսաշրջություն (եռամսյակային) վիճակագրական հաշվետվության ձևերն և լրացման հրահանգները համաձայն հավելված 1-ի 2-ի 3-ի և 4-ի, ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի ապրիլի 4-ի ««Միջազգային և ներքին զբոսաշրջիկության մասին Ձև թիվ-1 զբոսաշրջիկություն պետական վիճակագրական հաշվետվությունը և դրա լրացման մասին հրահանգը հաստատելու մասին» թիվ 35 որոշումը, սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

/Նորմատիվ/

7. Հաղորդում՝ արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

7.1. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Վելիկի Նովգորոդ քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 21-ից 26-ը «Մարդահամարի անցկացման հարցերով ԱՊՀ երկրների ազգային վիճակագրական մասնագետների համար կազմակերպված» ուսուցանող սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Բ.Գևորգյան/

7.2. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 22-ից նոյեմբերի 2-ը Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) վիճակագրական դեպարտամենտի կողմից կազմակերպված «Ազգային հաշիվների վիճակագրություն (JY18.30)» թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Հ. Տիպիզյան/

7.3. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 23-ից 26-ը Արևելյան Եվրոպայի, Կովկասյան և Կենտրոնական Ասիայի երկրների (ԱԵԿԱ) մասնագետների կարողությունների զարգացմանը միտված «Միգրացիայի և դրամական փոխանցումների գնահատումը» աշխատաժողովին և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) և Եվրոստատի «Միգրացիայի վիճակագրություն» խորագրով աշխատանքային նստաշրջանին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/

7.4. Հաղորդում՝ Կորեայի Հանրապետության Դեջոն քաղաքում 2018 թվականի հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 1-ը ԱՄԿ-ԿՈՍՍԱՏ համատեղ ծրագրի շրջանակում «Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում միջազգային աշխատանքային միգրացիայի վիճակագրության տվյալների հավաքագրում 4-րդ աշխատաժողովին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/

7.5. Հաղորդում՝ Շվեյցարիայի Նյուշատել քաղաքում 2018 թվականի նոյեմբերի 5-ից 9-ը Շվեյցարիայի Ֆեդերալ վիճակագրական գրասենյակի կողմից կազմակերպված «Տվյալների վերլուծություն և տվյալների մոդելավորում» վիճակագրական ոլորտի դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Մ. Դալլաքյան, Ա. Հակոբյան/

7.6. Հաղորդում՝ Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 2018 թվականի նոյեմբերի 8-ից 11-ը Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության /ՇՄԵԳ/ և Եվրոպայի Խորհրդի կողմից կազմակերպված Եվրոպական բնապահպանական միասնական տեղեկատվական համակարգի ներդրման արևելյան երկրորդ փուլի (ENI-SEIS II EAST) տարածաշրջանային աշխատանքային խմբի համար կազմակերպված Բեռնի կոնվենցիայի N8 (2012) բանաձևի ներքո հաշվետվողականության և պահպանվող տարածքների ցուցանիշների մշակման վերաբերյալ աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Համբարձումյան/

7.7. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2018 թվականի նոյեմբերի 13-ից 14-ը Եվրոպական հարևանության գործիքի ներքո և Շրջակա միջավայրի Եվրոպական գործակալության կողմից Արևելյան գործընկերության երկրներում իրականացվող «Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգի» (ՇՄՄՏՀ) ներդրման ծրագրի երկրորդ փուլի (ENI SEIS II East) ղեկավար կոմիտեի 3-րդ նիստին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան /

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհապական/

24.12.2018թ. նիստին

Մասնակցում էին՝

- ՀՀ ՎՊԽ նախագահ՝ Ս.Մնացականյանը,
- ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ն. Բաղդասարյանը,
Վ.Դավթյանը, Լ.Պետրոսյանը,
- ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը

Հրավիրված էին՝

- ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական Լ.Միրզոյանը,
- ՀՀ ՎԿ իրավաբանական բաժնի պետ Ա. Վարդանյանը,
- ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա.Գրիգորյանը,
- ՀՀ ՎԿ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ.Մարկոսյանը
- ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը,
- ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը,
- ՀՀ ՎԿ արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Հ. Հովհաննիսյանը,
- ՀՀ ՎԿ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը,
- ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը,
- ՀՀ ՎԿ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը,
- ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Պետրոսյանը,
- ՀՀ ՎԿ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը,
- ՀՀ ՎԿ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան,
- ՀՀ ՎԿ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Զ. Ավետիսյանը,
- ՀՀ ՎԿ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի երկրորդ կարգի մասնագետ Ա. Պետրոսյանը

Նիսպրում լավեցին հեղեղայլ հարցերը.

1. ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին իրականացված «Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության» արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին հարցը

/Զեկուցող՝ Լ. Մարկոսյան /

Որոշեցին՝

Ղեկավարվելով «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով թույլատրել ՀՀ վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների հետազոտությունների վիճակագրության բաժնին՝ Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակին տրամադրել ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան: Տվյալները կարող են օգտագործվել բացառապես հետազոտական նպատակներով, չեն կարող փոխանցվել այլ անձանց, չեն կարող հրապարակել անվանական հարթության անվանազերծված որևէ տվյալ և համադրվել այլ աղբյուրներից ստացված անվանական տվյալների հետ, նշվելու են բոլոր հրահանգավորված նյութերի աղբյուրները, այդ անվանազերծված տվյալները հետազոտություններից հետո ոչնչացվելու են:

/Անհատական/

2. «Կինոարտադրող կազմակերպությունների գործունեության մասին» ձև 1-կինո (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 19-ի թիվ 183-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը

/Զեկուցող՝ Ա. Գրիգորյան/

Որոշեցին՝

Ղեկավարվելով «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 18-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

1. հաստատել՝ «Կինոարտադրող կազմակերպությունների գործունեության մասին» Ձև 1-կինո (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 1-ի,
2. հաստատել՝ «Կինոարտադրող կազմակերպությունների գործունեության մասին» Ձև 1-կինո (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևի լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 2-ի,

3. ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002թ. օգոստոսի 19-ի ««Հաշվետվություն կինոարտադրող կազմակերպությունների գործունեության մասին» Ձև թիվ 1-կինո պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 183-Ն որոշումը, 4. սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

/Նորմատիվ/

3.««Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության մասին» ձև 1-գմ (տարեկան), «Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության մասին» ձև 1-գմ-1 (տարեկան) վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու դրանց լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 19-ի թիվ 195-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը

/Զեկուցող՝ Ա.Գրիգորյան/

Որոշեցին՝

Ղեկավարվելով «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 18-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

1. հաստատել «Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության մասին» Ձև 1-գմ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 1-ի,

2. հաստատել «Բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության մասին» Ձև 1-գմ-1 (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 2-ի,

3. հաստատել սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով հաստատված հաշվետվությունների ձևերի լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 3-ի,

4. ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002թ. օգոստոսի 19-ի ««Հաշվետվություն մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի աշխատանքների մասին» Ձև թիվ 1-գմ պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 195-Ն որոշումը:

5. սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

/Նորմատիվ/

4.«Ջրմուղի աշխատանքի մասին» ձև 1-ջրմուղ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի թիվ 178-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը

/Զեկուցող՝ Ա.Գրիգորյան/

Որոշեցին՝

Ղեկավարվելով «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 18-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

1.հաստատել «Ջրմուղի աշխատանքի մասին» Ձև 1-ջրմուղ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 1-ի,

2.հաստատել «Ջրմուղի աշխատանքի մասին» Ձև 1-ջրմուղ (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևի լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 2-ի,

3.ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002թ. օգոստոսի 12-ի ««Ամփոփ հաշվետվություն ջրմուղի աշխատանքի մասին» Ձև թիվ 1-ջրմուղ պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 178-Ն որոշումը,

4.սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

/Նորմատիվ/

5.««Կոյուղու աշխատանքի մասին» ձև 1-կոյուղի (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի թիվ 177-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին հարցը

/Զեկուցող՝ Ա.Գրիգորյան/

Որոշեցին՝

Ղեկավարվելով «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 18-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

1.հաստատել «Կոյուղու աշխատանքի մասին» Ձև 1-կոյուղի (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 1-ի,

2.հաստատել «Կոյուղու աշխատանքի մասին» Ձև 1-կոյուղի (տարեկան) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևի լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 2-ի,

3.ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002թ. օգոստոսի 12-ի ««Ամփոփ հաշվետվություն կոյուղու աշխատանքի մասին» Ձև թիվ

1-կոյուղի պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 177-Ն որոշումը,
4.սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

/Նորմատիվ/

6.««Ֆիզկուլտուրայի և սպորտային աշխատանքների մասին» ձև 1-սպորտ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը

/Զեկուցող՝ Ա.Գրիգորյան/

Որոշեցին՝

Ղեկավարվելով «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝

1.հաստատել «Ֆիզկուլտուրայի և սպորտային աշխատանքների մասին» Ձև 1-սպորտ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 1-ի,

2.հաստատել «Ֆիզկուլտուրայի և սպորտային աշխատանքների մասին» Ձև 1-սպորտ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևի լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 2-ի,

3.սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը օրվան հաջորդող տասներորդ օրը:

/Նորմատիվ/

7.«Հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության մասին» ձև 4-գմ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին հարցը

/Զեկուցող՝ Ա.Գրիգորյան/

Որոշեցին՝

Ղեկավարվելով «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով.

1.հաստատել «Հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության մասին» Ձև 4-գմ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 1-ի,

2.հաստատել «Հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների գործունեության մասին» Ձև 4-գմ (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևի լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 2-ի,

3.սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

/Նորմատիվ/

8.Հաղորդումներ արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին

8.1.Հաղորդում՝ Իտալիայի Հռոմ քաղաքում 2018թ. նոյեմբերի 26-ից 29-ը ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) հրավերով «Լեռների կանաչ ծածկույթի ինդեքս» թեմայով ուսուցողական սեմինարին մասնակցելու վերաբերյալ,

/Զեկուցող՝ Ա. Մարտիրոսյան/

8.2.Հաղորդում՝ Թուրքիայի Ստամբուլ քաղաքում 2018թ. նոյեմբերի 27-ից 28-ը Եվրոպական հարևանության գործիքի ներքո ընթացող միասնական տեղեկատվական համակարգի ներդրման արևելյան երկրորդ փուլի (ԵՀԳ-ԵԲՄՏՀ II Արևելք/ENI-SEIS II EAST), Արևելյան Եվրոպայում և Կովկասի տարածաշրջանում ջրի բաղադրիչի «Ցուցանիշի մշակման և ցուցանիշի հիման վրա գնահատման ձևավորման վերաբերյալ գիտելիքների և փորձի փոխանակում» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ,

/Զեկուցող՝ Ն. Մանդայանը /

8.3. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշնև քաղաքում 2018թ. նոյեմբերի 28-ից 29-ը Էներգիայի միջազգային գործակալության կողմից կազմակերպված Էներգետիկայի վիճակագրության 16-րդ դասընթացին մասնակցելու վերաբերյալ,

/Զեկուցող՝ Հ. Հովհաննիսյանը /

8.4. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2018թ. նոյեմբերի 29-ից 30-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) և Ավստրիայի վիճակագրական գրասենյակի հետ համատեղ Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի (CES) հովանու ներքո կազմակերպված. Աղքատության և անհավասարության չափման փորձագիտական խմբի և Աղքատության վիճակագրության ներդաշնակեցման թեմայով աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ,

/Զեկուցող՝ Գ. Գևորգյանը /

8.5. Հաղորդում՝ Բելառուսի Մինսկ քաղաքում 2018թ. դեկտեմբերի 4-ից 5-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված Արևելյան գործընկերության վիճակագրական փորձագիտական աշխատանքային խմբի 7-րդ հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ,

/Զեկուցող՝ Ա. Ավագյանը, Ք. Պողոսյանը, Ա. Հակոբյանը /

8.6. Հաղորդում՝ Սերբիայի Բելգրադ քաղաքում 2018թ. դեկտեմբերի 5-ից 6-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և Սերբիայի վիճակագրական ծառայության կողմից կազմակերպված «Վիճակագրական արտադրության ճարտարապետությունը և ծրագրային ապահովման համատեղ օգտագործումը» խորագրով միջազգային գիտաժողովին մասնակցելու վերաբերյալ,

/Զեկուցող՝ Ռ. Պեդրոսյանը /

8.7. Հաղորդում՝ Ռուսաստանի Մոսկվա քաղաքում 2018թ. դեկտեմբերի 5-ից 6-ը ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կողմից կազմակերպված «Երիտասարդների վերաբերյալ վիճակագրության զարգացման հիմնահարցերը ԱՊՀ անդամ երկրներում» խորագրով աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ,

/Զեկուցող՝ Կ. Կոչումջյանը /

8.8. Հաղորդում՝ Ռուսաստանի Մոսկվա քաղաքում 2018թ. դեկտեմբերի 12-ից 13-ը ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների փորձագետների աշխատանքային խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ,

/Զեկուցող՝ Ն. Ասրվաձապուրովա, Զ. Ավերիսյան /

8.9. Հաղորդում՝ Թուրքմենստանի Աշխաբադ քաղաքում 2018թ. դեկտեմբերի 10-ից 11-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված աշխատանքային հանդիպում «Թուրքմենստանի արտաքին առևտրի վիճակագրության վարման փորձը, EUROTRACE համակարգի կիրառումը Թուրքմենստանի արտաքին առևտրի տվյալների հավաքման, կազմման և տարածման գործում» թեմայով աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Պեդրոսյանը /

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն: